

3545

100

281.6
—
Q - 51

1913

Դ. ԳՈՒՄԱՐՈՒՄ


ԱՄԵՐԻԿԱՀԱՅ Ա.ՉԴ. ԵՐԵՍՓ. ԺՈՂՈՎԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՔԱՄԱՆԱԿԱՀՈՐ ԼԻԱԶՈՐ ՊԱՏՈՒԻՐԱԿԻ

ԴԵՐ. Տ. ԳԵՂՈՐԳ ԱՐՔԵՊ. ԻԻԹԻԻՃԵԱՆԻ :

20—21 Սեպտ. 1913, Ուսուր, Մէսս.



2001

ՊՈՍՏՈՆ

281.6
Q-51

ՀԿԿԱ ՏՊԱՐԱՆ
1913



2010

6050

Դ. ԳՈՒՄԱՐՈՒՄ



30344-42

Q-51

- 5 -

Դ. ԳՈՒՄԱՐՈՒՄ

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԱԶԴ. ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԽՈՐ ԼԻԱԶՈՐ ՊԱՏ-
ՈՒԻՐԱԿ ԳԵՐ. Տ. ԳԵՐՈՒՄ ԱՐԳԵՊ. ԻՒԹԻՒՃԵԱՆԵ

20-21 Մեկտ. 1913

Ա. ՆԻՍ

Ժողովը բացուեցաւ կեսօրէ վերջ (20 Մեկտ.)
ժամը 2.30ին, Նախագահ Արքաղանձն ադօթքով,
և ներկայութեամբ 16 երեսփառաներու, օրա-
կարգ ունենալով.

1.— Ընթերցում նախորդ նիստի արձանագ-
րութեան:

2.— Վաւերացում նորընտիր երեսփոխաններու:


3.— Ընտրութիւն Առաջնորդի:

4.— Վարչութեան հրաժարականի խնդիր:

5.— Առաջնորդական պիտոճէ:

6.— Վերաքննութիւն Ամերիկահայ Ասհմա-
նագրութեան:

7.— Գաղթային հարց: Եջմ. ՊԱՏԵԱԴՐԱՆ



13038-58

Նախագահ Սր. — Խնչպէս զիտէք վեհ. Հայրակածը մեղի պաշտօն յանձնեց գալ Ամերիկա, կարգադրելու վիճակային գործերը, քննելու բողոքները, և ի դեպ անհրաժեշտութեան լուծելով ժողովները, նորերը ընտրելու։ Ես հարկ չ'տեսայ լուծելու երեսփ. Ժողովը, որովհետեւ յետ քննութեան տեսայ, թէ ընորութիւնները օրինաւորապէս կատարուած էին. Հետևաբար հրահանգներ տուինք այս գումարումին համար, յանձնարարելով պակասեալ երեսիումաններու տեղ նորերու ընտրութիւնը։ Երբ գործերը օրինաւորութեամբ յառաջ երթալ սկսած էին, Նիւ Եորքի Հոգաբարձութիւնը իր պաշտօնական գրութեամբ կը պնդէր մեզ լուծել երեսփ. Ժողովը Յորդորեցինք որ ետ կինան իշրենց անհիմն ու ազօրէն պահանջումէն, և իշրենց երեսիումաններուն ընտրութիւնը կատարեն։ Նախ անպաշտօն նամակ մը գրեցի Հոգաբարձութեան անդամներէն մէկուն, և ցոյց տուի իշրենց պահանջումներուն ափօրինութիւնը։ Յետոյ Հոգաբարձութեան Ատենապետին հետ տեսակցեցայ, որ համոզուած և գոհուն ակութեամբ մեկնեցաւ ինէ. բայց բողոքը շարունակեցին։ Կը ցաւիմ ըսելու, թէ բողոքը իր պարզ, համեստ և օրինաւոր վիճակին մէջ չմնաց. սպասնալիքի սկսան, իր նախաձեռնութեամբ գումարուած միթինկով, Ամերիկահայ ժողովուրդին մէջ խոռովութիւններ յարուցանելու, և մենք մտածելով թէ Նիւ Եորքի Հոգաբարձութեան և կուսակցութեանց կողմէն յարուցուելիք ալդ խոռովութիւնները օպատակարութեան Ամերիկահայ գալութին, որ պէտք ունի խաղաղութեան և սի-

րոյ, հիմուռելով մեր լիազօրողթեան և Ամերիկահայ Սահմանադրութիւն 12րդ յօդուածին վրայ առժամաբար դադրեցուցինք Նիւ Եորքի Հոգաբարձութիւնը, վիրշնական կարգադրութիւնը թողլով ժողովիդ, Թուղթերը մէջտեղն են. քննեցէք, լուրջ վիճաբանութեամբ, և իրը և խաղաղութեան և օրէնքի մարդեր, բանի որ ես եկած եմ կաթողիկոսական Օքանութիւնը բերելով ձեզի հետ աշխատելու։ Ծնորհակալ եմ ձենէ որ եկաք օժանդակելու ինձի։ Ու ատի նախ դիւանը ընտրեցէք, որ գործերու սկսինք։

Երեսփ. Ժողովի կը մասնակդէին հետեւեալ թեմերը իրենց պատգամաւորներով.

ՈՒՍՏՐ

Հովիւ. Տ. Արսէն Ծ. Վրդ. Վեհունի։
Կիրակոս Սարգիսեան։
Յակոբ Երէցեան։
Նշան Յովսէփեան։
Գրիգոր Մարգարեան։

ՊՈՍՏՈՆ

Հովիւ. Տ. Մուշեղ Արքեպ. Սերոբեան։
Տր. Փառնակ Ա. Աղամեան։
Վահան Քիւրքեան։
Գէորգ Սրապեան։

ԼՕՐԻՆՍ

Աւետիս Յակոբձանեան։

ՓԲՈՎՀԵՑՆՍ

Հովիւ (Հ'ունի)։

Աւետիս Տէրոյենց:
Նիկոլոս Խաչմանեան:
Գէորգ Տ. Մաղաքեան (բացակայ),

ՈՒԵՍԹ ՀՈՊՈԲՅՆ

Հովիւ Տ. Մեսրոպ Քհնյ. Սահակեան:
Կարապետ Զանգալեան.

Մկրտիչ Գալայճեան,

Հայկ Սմարեան:

ԹՐՈՅ

Հովիւ Տ. Տրիփոն Վրդ. Պիծակեան:
(աշխարհական երեսինսան չեր ընտրուած):

ՖԻԼԱՏԷԼԻՖԻՍ.

Հովիւ (չ'ունի):

Նաղարէթ Կիւմիւշկէրտանեան:

ՈՒԵՍԹ ՓՈՒԼԵՒՅՆ

Հովիւ Տ. Դաւիթ Քհնյ. Տ. Աւետիսեան:
(Աշխարհական Պատգամաւոր չ'ունի):

ԼՕՍ ԱՆՃԵԼԵՍ

Հովիւ Փոխանորդ՝ Տ. Յակոբ Քհնյ. Բարե-
ջանեան:

Մաղաք Պէրպէրեան:

ՖԱԼԻԾՐ

Հովիւ (չ'ունի):

Գեղամ Միքրոյեան:

ԹՐԵԶՆՅ

Հովիւ Տ. Վարդան Մ. Վրդ. Գասպարեան:
(Բացակայ) հեռաւորութեան պատճառաւ):

Մաղաք Պէրպէրեան:

Գէորգ Թուրմաճանեան:

Ներկայ Երեսփոխանները ներկայութեան առ-
մարին մէջ սոսրաբած ըլլալով / ձեռնարկուեցաւ
Դիւանի կազմութեան, և քուէից մեծամասնու-
թեամբ ընտրուեցան:

Տր. Փ. Ա. Ագամեան

Կարապետ Զանգալեան

Աւետիս Տէրոյեան

Հայկ Ամսուրեան

Բ. »

Սոյն բնարութենէն վերջ ժողովը նախորդ

նիստի ատենազրութեան բնթերցուով միւս օր-
ուան նիստին ցետաձգելով, զրադեցաւ նորւնաիր
երեսփոխաններու վաւերացման գործով:

Պոսթօնի թեմին երկու երեսփոխաններէ, մին՝
Պրն. Յովեան Դանիէլեան հրաժարած ըլլալով, նո-
րին ընտրութեան հրանանդ արուած էր, և բրոլին.
հետեւ Պոստօնի եկեղեցուոյ անդամները շատցած
էին, թեմական ժողովը ըստ օրինի երկու նոր ե-
րեսփոխաններ ալ ընտրած էր յանձին վահան,
Քիւրքեանի և Գէորգ Սրապեանի: Տեղեկազրին
ընթերցումէն յետոյ ընտրութիւնը օրինաւոր զըտ-
նելով վաւերացուցի Նմանապէս վաւերացուեցան
Ֆիլատելիփոյ և Լօս Անձէլըսի երեսփոխաններուն
ընտրութիւնները, և ժողովը միտքայնութեամբ ո-
րոշեց, որ Պրն. Մաղաք Պէրպէրեան Ֆրէլոյիր և
Լօս Անձէլըսի երկու ձայներն ալ պահէ իր վրայ:

Յետոյ ի դիմաց հրաժարեալ կեղր. Վարչու-
թեան, Տ. Մուշեղ Սրբեպիսկոպոս Սերոբեան Ե-
րեսփոխանական ժողովի չմասնակցող թեմիրու մա-

սին տեղեկութիւններ տուաւ Հոս համառօտիւ
կը դնենք արուած բացատրութիւններ,

1.— Նիւ Եօրքի Թեմի մասին արդէն պէտք
եղ սծ բացատրութիւնը տուաւ Նախագահ Սրբազնը.

2.— Թրոյ Նախ մերժեց Նիւ Եօրքի Հոգաբար-
ձութեան ընթացուցիչ թելաղբութիւնը, և հա-
ճութիւն յայտնեց Ժողովիս մասնակցելու Յետոյ
նոյն Հոգաբարձութեան առժամեայ դադրեցումին
դէմ բոլոքելով երեսփոխան չ'զրկեց :

3.— Առաջնորդական վեց թեմեր ունեինք.
Լին, Լովէլ, Նիւթըն Էփը Փուս, Փորթէնտ, Ռիչ-
մոնտ, Եդէմ, Թէպէտ ըստ Ամերիկահայ Սահմա-
նադրութեան ՅԹրդ յօդուածի Տնտեսական Ժողովին
կ'իշեար սոյն թեմերու երեսփոխաններուն ընտրու-
թիւնը, բայց այս վերջինը կամաւորապէս հրաժա-
րեցաւ իր իրաւունքն, և տեղուոյն Հոգաբարձու-
թիւններուն յանձնաբարեց երեսփոխանի ընտրու-
թաւն կատարել. Լին պատասխանեց թէ չկրնար
երեսփոխան զրկել զրամ չունենալուն համար, իսկ
մասցեալները չ'պատասխանեցին, կել եկ թեմական
կազմակերպութեան չզոյութեան համար, Լովէլ
Թէպէտ ամէն ճիզ ըրաւ մասնակցելու բայց իր ե-
րեսփոխանը չկրցաւ հասցնել.

4.— Եփակօի Հոգաբարձութիւնը ապօրէն
կերպով ընտրուած ըլլալով կեղք. Վարչութիւնը
լուծեց և նոր ընտրութեան հրահանգ տուաւ: Վեր-
ջին պահուն Եփակօն հասած հեռագիր մը կըսէ,
թէ ժամանակը ուշ ըլլալուն պիտի չկրնայ կազմա-
կերպուիլ, և երեսփոխանի ընտրութիւն կատարել:

Եփակօի թէքը կալմակերպուած չ'ըլլալոն համար
է, որ Ուէսթ Փուլմէն երեսփոխան չ'ունենար, ո-
րովհետեւ ինքը Եփակօի թեմին մասը կը կազմէ:

Հոգաբարձութեան ատենապետին
կողմէն տրուած սոյն բաց ստրութիւնները գոհա-
ցուցիչ համարուեցան:

Լոս Անձէլըսի թեմ. Հովի Տ. Թէոդորոս Քէյ.
Խանակեան իր ձ'յնը տուած էր Տ. Արսէն Ծ.
Դրդ. Վեհունիի, և որովհետեւ ինքը Ուստի Հով-
գութեան ձայնը ուներ արդէն, Տ. Թէոդորոսի
ձ'յնը տուաւ. Տ. Յակոբ Քէյ. Բարեջանեանի, և
այս կարգադրութիւնը ընտրուեցաւ Երեսփոխանա-
կան Ժողովն:

Մէկ ժամ դադարէ յետոյ ժողովը վերսկսաւ
ժամը 8ին, և զբաղեցաւ ընթերցումովը թղթակ-
ցութեանց, որոնց մէջ կային Նիւ Եօրքի Հոգաբար-
ձութեան բոլոքը, և Պոստոնի ինն ազգայնոյ մէկ
յիշատակագիրը, իր յարակից պաշտօնագրերով.

Երկար ատեն. Նիւ Եօրքի Հոգաբարձութիւն
ընթացքի և լիազօր Պատուիրակ Սրբազնին ըրած
տնօրէնութեանը մասին թերուուզէմ կարծեաց փոփո-
խութենէ յետոյ, Երեսփ. Ժողովը դատապարտեց
Նիւ Եօրքի Հոգաբարձութիւնը իր ընթաց և պա-
ռակտիչ ընթացքին համար, հաւանութիւն յայտնեց
իր նախագահին ըրած կանխահոգ կարգագրութեա-
նը ի մասին եւ Եօրքի Հոգաբարձութեան, և միա-
ձայնութեամբ նոյն Հոգաբարձութեան չկրնական
լուծումը վճռեց, և նորին ընտրութեան խնդիրը
յանձնեց Ուէսթ Հոպոքընի և Ֆիլատելֆիոյ Պատ.

Հոգաբարձութեանց:

Կ արդացուեցաւ Պոստոնի ինն ազդայնոց բողոք
-իշտատակազիրը, որուն ստորագրողները հիմնուե-
լով Ամերիկանայ Սահմանդրութեան 8 և 32րդ
յօդուածներուն վրայ, կը պնդէին, թէ այս Երես-
փրանական ժողովը անվաւեր է, և անոր գու-
մարումը ապօրէն, թէ՝ եթէ իսկ ապօրէն չ'ըլլայ,
պէտք չէ որ անոր վրայ նոր անդամներ աւելցուած
ըլլային:

Այս առթիւ կարդացուեցաւ Պոսթոնի թեմի
Հոգեոր Հովիւ Գեր. Տ. Մուչեղ Արքեպիսկոպոս
Աերորեանի մէկ պաշտօնագիրը. որով կը յայանէր,
թէ հակառակ Պատուիրակ Արքազանին գրաւոր հը-
րանանդին չէր կրնար այդ անհատական բողոքը
Հոդ որ սրչութեան և թեմական ժողովի պաշտօնա-
կան սեղանին վրայ դնել, ոչ միայն անոր համար
որ բողոքողները իրենք իսկ խնդրած են իրմէ,
իրենց գիրը նոյնութեամբ վերագրձնել ի. թիւճի-
եան Արքազանկ, այլ և անո՞ր համար, որ թեմա-
կան ժողովը լսած ըլլալով բողոքող-ընկերներէ
այս գրին պարունակութիւնը, անհատական խնդիր
նկատած է զայն, և Երեսի. ժողովի օրինաւորու-
թիւնը ճանչնալով որոշած է մտանակցիլ նիստե-
րուն, և երկու նոր երեսփոխաններ ընտրած, ո-
րոնցմէ մին վահան Քիւրքճեան, բողոքագիրը ստո-
րագրողներէն մին. և իր կողմէ երեսփոխանի պաշ-
տօնը ընդունիլը պաշտօնական հերթումն է իր
ըրած բողոքին:

Այս միւնոյն իմաստով գրած է նուև անպաշ-
տօն կերպով, Պոսթոնի կեղը. Հոգաբարձութեան

անդամից մեծամասնաւմիւնը, յաւելով միւնոյն
ժամանակ, թէ Երեսի. Ժողովի օլքնաւորութեան
մասին իրեն պէս կը խորհի Պոսթոնի Ա.զգ. Եկեղեց-
ուույ անդամներուն սուուար մեծամասնութիւնը:

Այս նամակներու ընթերցումէն վերջ Պըն.
Վահան Քիւրքճեան խօսեցաւ. ուրիշներ մատնանը-
շեղին իր հակառական ընթացքը, և վիճաբանու-
թիւնը յեռաձգուեցան վազուան նիստին:

Կարդացուեցան վեհ. Հայրապետի Դիւանական
պաշտօնագրերը, ուղղեալ առ Լիազօր Պատուիրակ
Հայրն, և առ Ամերիկանայ Կեղը. Վարչութիւնն,
որոնք ունկնդրուեցան պատկառանօք, և յոտնկայս
մաղթանք կատարուեցաւ Ն. Ս. Օծոթեան կենաց
Երկարութեան համար:

Եւսոյ Առաջնորդական Պիւտճէն պատրաստե-
լու համար Յանձնախումբ մը լնտրուեցաւ հետե-
եալ երեսփոխաններէն. Տիարը Ե. Կիւմիւչէրտան,
Կ. Կ. Զանգալեան, Ն. Խաչմանեան, Ա. Տէրոյենց
և Ա. Յակոբճանեան: Ժողովը ժակուեցաւ ժամը
11ին, և որոշուեցաւ Ժողովի նիստը բանալ յաջորդ
շաբաթ ժամը 9ին:

Բ. ՆԻՍՏ

21 Սեպտ. 913

Առաւօտեան ժամը 9ին 24 երեսփոխաններու
ներկայութեամբ, և նախագահ Արքազանին ազօթ-
քով Ժողովին նիստը բացուեցաւ:

Պըն. Մալաք Պէրպէրեան կարդաց Երեսի. Ժո-
ղովի նախորդ գումարման արձանագրութիւնը, որ

աւանց զիտողութեան վաւերացուեցաւ նոյնութեամբ:

ՆԱԽՈԳԱՀ ՍՐՅ. — Ինչպէս արդէն պաշտօնապէս ձեզի զըրկուած Օրակարգէն տեսաք, Կեդր. Վարչութիւնը հրաժարական տուած է մեզ: Որպէսզի մենք առանց օգնականի չ'մնայինք, մեր գործառնութեանց ընկեր ունենալու համար զիրենք, խնդրեցինք իրենցմէ որպէսզի շարունակեն իրենց պաշտօնը, մինչև ժողովիդ գումարումը: Պիտի թելադրէի, որ Կ'եղր. Վարչութեան ընկրութիւնը նախագասուէր առաջնորդական ընտրութեան գործին:

ԶԱՅՆԵՐ. — Ինչո՞ւ կը հրաժարին, թող շարունակեն գործերնին, ինչո՞ւ անպատճառ նոր ընտրութիւն կատարենք:

ՄՈՒՇԵՂ Ս. ՐԿԵՊ. — Կեդր. Վարչութիւնը գիտակից իր գործին, և Խւթիւնեան Սրբազնին յանձնուած պաշտօնին կարեւորութեանը. առաջին օրէն ուզեց որ Կաթ. Լիբազօր Պատուիրակը ազատ ըլլայ ո՛ւ և է կաշկանդումէ: Որովհետեւ Ամերիկահայ Գաղութին մէջ տարօրինակ մտայնութիւններ գոյութիւն ունին, մենք մեր անձն ու պաշտօնը ո՛ւ և է կասկածէ վեր բանելու, և Պատուիրակ Սրբազնին առջև գործունէութեան ձամբան բաց թողլու համար մեր հրաժարականը տուինք Նորին Սրբազնութեան: Եւ եթէ հրաժարենէս վերջ շարունակեցինք մեր առժամեայ պաշտօնը, ատիկա ըրինք մշմւայն Նորին Սրբազնութեան խնդրանքին վրայ, և իրեն օֆանդակեյու մտալութեամբ կը կարծեմ, թէ ամէն պարկեշտ և կարգապահ պաշտօնէ-

ութիւն այսպէս պիտի վարուէր: Հիմա իմ ընկերներուս կողմէն ալ կուզամ յայտարարելու, թէ մեր հրաժարականը հաւաքական է և վերջնական:

Ն. ԿԻՒՄԻՒԾԿԵՐ. — Թող կարգացուի Կեդր. Վարչութեան հրաժարականը, լսել կուզինք զայն:

ՄԱՂԱՔ ՊԵՐՊԵՐԵԱՆ. — մեր հրաժարականը բերանացի տուած ենք Պատուիրակ Սրբազնին, և արձանագրուած է իր նախագանութեամբ գումարւած Կեդր. Վարչութեան արձանագրութեան մէջ: (Ու կարդաց արձանագրութիւնը):

Ա. ՏԵՐԱՅՑԵՆՑ. — Քանի որ Երեսփ. Փողուիսուզզուած հրաժարագիր չ'կայ, Փողովս չկընարայդ խնդիրը նկատողութեան առնուլ:

ԱՆԺԻՉԱՊԷՏ. Տ. ՄՈՉԵՂ Ս. ՐՔԵԿ. — Սերոբեան զըրեց Կեդր. Վարչութեան հրաժարագիրը, զոր ստորագրեցին անդամները, և ներկայացուին երեսփ. ԺԴՂՈՂԻ Դիւնանին: Ատենա գետը կարդաց զայն:

Ա. ՅԱԿՈԲՃԱՆ. — Ես կ'առաջարկեմ, որ հրաժարականը մերժուի, և հրաւիրուի Կեդր. Վարչութիւնը, իր շրջանը լրացնել:

ՈՐՈՎՀԵՏԱԿ Վարչութեան անդամները կը պընդէին հրաժարականին վրայ, Երեսփ. Փողովս շնորհակալութիւն յայտնեց Կեդր. Վարչութեան ուղղամիտ և օրինաւոր գործունէութեան մասին, և նոր ընտրութեան եռապատիկ ցանկը պատրաստելու համար կազմեց յանձնախումբ մը հետեւալներէն. Գեր. Տ. ՄՈՉԵՂ Ս. ՐՔԵԿ. — Սերոբեան Տիարք, Մ. Գալայճեան, Կ. Սարգիսիան, Ն. Խաչմանեան:

Ժողովը իրեն ներկայացուած եռապատիկ ցան-

կին վրայէն կատարեց իր ընտրութիւնը Կիդր .
Վարչութեան Ծնտեսական Խորհուրդին , որուն ան-
դամակցութեան հրաւիրուեցան

Մալոք Պէր զէրե ան	21	քուէով
Տր. Փառնակ Աղամեան	16	»
Գեղամ Միքրոյեան	13	»
Գէորգ Սրապեան	13	»
Նիկոլոս Խաչմանեան	10	»

Առյն ընտրութեանէն վերջ Նախագահ Սրբազնը
պահպանիչով որհնեղ ընտրուած անդամները , և վա-
երացուց անոնց ընտրութիւնը :

Եւտոյ Մուշեղ Սրբնափսկոպոս ներկայացուց
Ամերիկահայ Թեմերու մէջ պաշտօնի վրայ գտնուող
եկղղեցականներու անունները , յայտնելով , թէ հա-
կոսակ աշխարհական արժանաւոր ընտրելիներու
առատութեանը , Կրօն . Ժազովոյ ընտրութեան հա-
մար եռապատիկ ցանկ կազմելու անհնարութեան
մ.ջ կը գտնուինք , քանի որ Ամերիկահայ Թեմը
այդ մասին չափազանց աղքատ է . ինչ որ ունինք
կրնանք անոնց անունը կարդալ տախտակին վրայ
Ահա պաշտօնի վրայ դժոնսւող եկղղեցականներուն
անուններու ցանկը .


- Տ. Մուշեղ Սրբեակ . Սերոբեան (Պոստոն)
- Տ. Արաք Ծ . Վրդ . Վեհունի (Ուստր)
- Տ. Վարդան Ծ . Վրդ . Գասպարեան (Վրէզնօ)
- Տ. Տրիփոն Վրդ . Պիծակեան (Թրոյ)
- Տ. Թէոդորոս Քէյ . Խոսհակեան (Լոս Անձէլը)
- Տ. Դաւիթ Քէյ . Աւետիսեան (Վ. Փուլմէն)
- Տ. Մեսրոպ Քէյ . Սահակեան (Վ. Հոպոբըն)
- Տ. Մատթէոս Քէյ . Մանիկեան (Նիւ Եորք)

Ն. ԿիհլիիհնէկիթՏն . — Ա. Կ'առաջարկեմ , որ
Ֆրէզնօի , Լոս Անձէլը և Ուէսթ Փուլմէնի հո-
վիւները իրենց տեղերուն հեռաւորութեանը պատ-
ճառով գուրս ձգուին և մնացեալ հինգ անդամնե-
րով կազմակ Կեդր . Վարչութեան Կրօն . Ժողովը

Ն. ԽԱՇՄԱԿԱՆԵԱՆ . — Այս ցանկին մէջ անուն մը
կայ , որ պէտք չէ մտնէ ընտրութեան մէջ . ատիկա
Տ. Մատթէոս Մանիկեանն է : Այդ մարզը ոչ միայն
խռովութիւններու պատճառ տուած է , այլ և մատ-
ունեցած է Նիւ Եորքի խնդիրներուն մէջ , և բա-
ցարձակապէս ըմբոստ դիրք մը , և անվայել ոճ մը
գործածած է Պատուիրակ Սրբազնին ուղղած նա-
մակներուն մէջ : Ուստի ես կ'առաջարկեմ , որ ա-
նոր անունը ջնջուի ցանկին :

Ուէսթ Հոպոքընի և Ուստրի Երեսփոխաննե-
րուն կողմէն միեւնոյնը շեշտուեցաւ , ու յետոյ բա-
ցարձրութիւն ուղուելով Նախագահ Սրբազնին ,
Խորին Գերապատուութիւնը հաստատեց իրողու-
թիւնը , և Մատթէոս Քէյ . Մանիկեանի կողմէ ան-
պատշաճ լեզով գրուած մէկ նամակը ժողովին
ներկայացուց : Ասոր վրայ ժողովը միաձայնու-
թեամբ ջնջեց Մատթէոս Քէյ . Մանիկեանի անունը
ընտրելեաց ցանկին , և Կրօն . Ժողովը կազմեց հե-
տևեալ կերպով .

- Տ. Մուշեղ Սրբեակ . Սերոբեան :
- Տ. Արաք Ծ . Վրդ . Վեհունի :
- Տ. Տրիփոն Վրդ . Պիծակեան :
- Տ. Վարդան Ծ . Վրդ . Գասպարեան :
- Տ. Ենարոպ Քէյ . Սահակեան :



Սոյն ընտրութենէն վերջ ժողովը զբաղեցաւ Առաջնորդական Պիւտմէի Յանձնաժողովին տեղե կագրով, և երկար վիճաբանութենէ յետոյ, բնդունուեցան 1200 տոլար իրրև տարեթոշակ Առաջնորդի, և միահետ մասերուն կարդաղրութիւնը յանձնեց Կեդր . Վարչութեան անօրինութեանը :

Գերսատին ձեռք առնուեցաւ Պոստոնի ազգայիններու բողոքը, և Պրն . Վահան Քիւրքնան երկարօրէն խօսեցաւ իրենց բողոքի օրինական կէտերուն վրայ, ընդլայնումներով կրկնեց իրենց բողոքն օրինական կէտերը, փաստելու համար Ժողովին ապօրինութիւնը^(*) : Եւ երբ իրենց դատին ինպաստ վկայութեան կոչեց Նիւ Եորքի, Թրոյի և Փրովիտէնսի Հոգտրարձութիւններուն բողոքները, այն ատեն Ատենապետը ընդմիջեց և ըստաւ . «Զեզի երբէք իրաւունք չեմ տար, որ Զեր դատին ինպաստ վկայութեան կոչէք դէպքեր, որոնք Զեր բողոքէն վերջը տեղի ունեցած են» :

Վ. ՔիիրթձեԱն . — Մենք մեր բողոքը զբած ատեն գիտէինք, թէ անոնք ալ պիտի գրէին:

ԶԱՅՆ ՄՀ . — Ուրեմն գաղտնի դաւադրութիւն կար ձեր մէջ :

Ն. ԻՒՆԵՄԱՆԵԱՆ . — Բրովիտէնսէն բողոք չի կայ, եթէ թուղթ մը գրուած կայ, ես կը հաւա-

(*) Սոյն ամփոփի համարատուութեան նեղ է չերր չէին ներեր ամէն խօսուած բառ առ բառ արձանագրելու . մանաւանդ որ սոյն բողոքագիրը զատէն տպուած ու կը ցրուըուէր ժողովուրդին :

տամ . թէ Դիւանն է զրած զայն, և Հոգաբարձութեան միւս անդամները տեղեկութիւն չ'ունին : ասոր ապացոյցն ալ սա է, որ հիմա հեռագիր մը ստացայ Բրովիտէնսի Հոգաբարձութեան մէկ անգամէն, որ ինձմէ կը խնդրէ Դիւանին կողմէ դըրկուուծ նամտակին պատճէնը միասին տանիլ :

Ա. ՃԵՐԱՅՅԵՆՑ . — Բրովիտէնսի Թեմը առարկութիւն ըրած չ'ունի Երկափ . Ժողովի օրինաւորութեան դէմ . Անիկա միայն Պատուիրակ Արբազանէն խնդրած է, որ Ժողովին նիստը շաբաթ մը յետածգուի, անկէ առաջ կարգադրուած տեղելու համար Նիւ Եորքի Հոգաբարձութեան խնդիրը : Մենք, Բրովիտէնսի հրեափոխաններս, Ժողովի գաւուէ առաջ Հոգաբարձութեան հետ ժողով գումարեցինք, կարծեաց փոխանակութիւններ ունեցանք ընտրելեաց մասին, և Հոգաբարձութիւնը ինըն էր որ 40 տողարի չէք մը յանձնեց մեզի ընդհանուր ծախուց մասնակցելու համար :

Վ. ՔիիրթձեԱն . — (Եր խօսքը շարունակելով) ակնարկութիւններ մ'ըրաւ Նախագահ Արբազանին անձին դէմ, թէ պէտք եղած ըննութիւնները չէ կատարած, և Պոստոնի Հովիւին դէմ ամբաստանութիւն ըրաւ . Այս միջոցին Նախագահ Արբարձանը յայտնեց, թէ ինք ըննութիւնները խըզնուածորէն դատամած է, և համոզումը կազմած է) :

ՄՈՒՆԵՂ, ԱՐՔԵՊ . — Ես չեմ պատասխաներ Պրն . Վահան Քիւրքնանի օրինական առարկութիւններուն, որովհետեւ արդէն Պութոնի Հոգաբարձութեան և Թեմական Ժողովի առջև օրինա-

պէս հերքած եմ իր փաստերը, և ժողովները ճանչ-
ցած են երեսփոխանութեան օրինաւորութիւնը։
Միայն կուզեմ երեք կէտերու մասին խօսիլ։

1. — Պրն. Քիւրքճեան ինքզինքին կր հակասէ
մէկ կողմէ ընդունելով այս ժողովին անդամակ-
ցութիւնը, և միւս կողմէ առարկելով անոր օրինա-
ւորութեան դէմ։

2. — Պրն. Քիւրքճեան չարաչար կը զործածէ
իրեն յանձնուած երեսփոխանի պաշտօնը, քանի որ
թեմական ժողովը իրեն իրաւունք չ'տուաւ իր
անձնական բողոքը ժողովիդ ներկայացնել, այլ
միայն յանձնարարեց կարգ մը պայմաններու տակ
ձեռնպան մնալ առաջնորդի ընտրութեան պահուն։

3. — Պրն. Քիւրքճեան չարաչար կը զործածէ
նաև այդ յիշատակաղբին տակ անհատապէս ստո-
րագրող իր ընկերներուն վստահութիւնը։

Եթէ երէկ գիշերուան նիստէն բանաւոր և
հարկեցուցիչ պատճառով մը մեկնիլ ստիպուած չըլ-
ւայի, ես պիտի չ'թողուի, որ այդ յիշատակաղիը
երեսփ, ժողովին առջև կարգացուէր, որովհետեւ
այդ բողոքը սառագրողներէն, և մեր Հոգաբար-
ձութեան անդամներէն Պրն. Յովհաննէս Սելեան
ինձմէն խնդրեց, որ այդ բողոքաղիը նոյն իսկ Հո-
գաբարձութեան առջև չ'անեմ, ըսելով, թէ անիկա
պարզ թելազրութիւն մըն է իւթիւնեան Սրբազնի
անձին ուղղուած։ Յետոյ՝ Հոգաբարձութեան ան-
դամոց մեծամասնութեան ոչպաշտօնական որոշու-
մով, դիմեցի Պրն. Աւետիս Սելեանի կարծիքին, որ
միենոյն ձեռով խօսեցաւ, և իր հղոր կողմէն յայտ-

նուած փափարը երկրորդեց, աւելցնելով սա խօսքը
զոր բառ առ բառ ժողովիդ կը ներկայացնեմ. և ե-
թէ իւթիւնեան Սրբազն փողոցէն անցած պահուն
անստոր սղիր այսպիսի թուղթ մը գտնէր ի՞նչ պիտի
ընէր նէ. թուղթն մեր թուղթն ալ այնպէս ընէ»։

Վ., Քիւրքճեան. — Մի՛ խեղաթիւրէք, այս
սինքն անիկա ըսել ուղեց, թէ այդ բողոքաղիը
որո՞ւ կողմէն ալ արուած ըլլար, նկատողութեան
արժանի էր։

ՄՈՒՆԵԵԴ. ԱՐՔԵՊ. — Ինչ որ թելեֆոնով ին-
ծի ըսուեցաւ Պրն. Ա. Սելեանի կողմէն, նոյնը
բառ առ բառ կրկնեցի։ Այս ժողովին միայն կը
մնայ այդ բառերուն արժէրը ձգել ու հասկնալ։

Հ. Արսէն Ծ. Վ. Վեհունի ձեռք առաւ վա-
հան Քիւրքճեանի կողմէն մատնանշուած Սահմա-
նադրական յօդուածները, և այդ յօդուածն երուն
վրայ հիմուած՝ փաստացի կերպով մի առ մի հեր-
քեց ժողովի օրինաւորութեան դէմ եղած առարկու-
թիւները, որոնք աւելի խեղաթիւրումի կը նմանին
բան թէ օրինական հիմերու, և ըսաւ, թէ «Այդ
յօդուածները կ'երեւի միայն փաստաբաններու մութ
կը մնան, իսկ մեզի պէս ոչ-օրէնսդէտներուն հա-
մար մութ կողմեր չունին բ'նաւ», (Ժօձաղներ)։
Յետոյ անդրագառնալով ամբաստանութեանց խընդ-
րոյն, ըսաւ, թէ «Նախագահ Սրբազնը իր քննու-
թիւնները կատարած է խղճի մտօք, բայց անիկա
ի՞նչ կրնար ընել երբ զրապարտիչ վատեր մութի մէջ
կր գործեն, կը խուսափին հրաւէրներէ, և քաջու-
թիւնը չեն ունենար իրենց ամբաստանութեանց եւ-

տին կանգնելու։ Ամօթ է ելք անձնական ։ կատումներ և խնդիրներ կը խառնինք հանրային գործերու մէջ։ Եթէ գուը Հովհանն դէմ զիտողութիւն մ'ունէիք, պարտաւոր էիք ըստ Ամերիկահայ Սահմանադրութեան։ Զիր բողոքը նախ ներկայացնել Պոստոնի Հոգաբարձութեան, կամ Թհմական ժողովին, ուրկէ պէտք է զայ կեդր. Վարչութեան։ Ուղղամիտ մարդիկ օրէնքով կը շարժին, և դուք պէտք է այսպէս ըրած ըլլայիք, առանց ժամավածառ ընելու Երեսփ. Ժողովը։

Ժողովի Ատհենապետը Ծր. Փառնակ Ադամեան կարգ մը օրինական կէտեր ալ մատնանշեց հերքելու համար Պրն. Վ. Քիւրքճեանի առարկութիւնները, ուրկէ վերջ վիճաբանութիւնները փակուած ըլլալով լորէնսի երեսփոխան Ա. Յակոբճանեան սա բանաձեւ ներկայացուց ժողովին։

«Երեսփ. Ժողովը լսեց Պոստոնի ինն ազգայիններու յիշտատակազիրը, և այդ առթիւ Պրն. Վահան Քիւրքճեանի բացատրութիւնները, և թեր ուդէմ վիճաբանութիւններէ ու կարծեաց փոխանակութենէ յետոյ սոյն խնդիրներու մասին հիազօր Պատուիրակին կարգադրութիւնները արդար և օրինաւոր ընդունեց։ Սոյն բանաձեւ նոյնութեամբ ընդունուեցաւ Ժողովիս միաձայնութեամբ, (բացի Վ. Քիւրքճեանէ անշուշտ)։

Կարգը եկած ըլլալով վիճաբանիլ առաջնորդական խնդրոյն և ընտրելիններու անձին չուրջ, որուուեցաւ պահ մը դռնփակ ընել նիստը, և խնդրուեցաւ ներկայ ժողովուրդէն, որ քանի մը վայր-

կեան բացակայի ժողովասրահէն։ Ժողովուրդը կատարեալ ակնածութեամբ և կարգապահութեամբ կատարեց Ժողովին բաղձանքը։

Ն. ԽՍՇՄԱՆԵԱՆ. — Արդեօք պիտի կընա՞ք, եթէ հար՞ ըլլայ, մեայն տեղապահի մը ընտրութեամբ գոհանալ։

ՆԱԽԱԳԱՀ. ԱՐԲ. — Ո՛չ, ես չեմ կընար տեղապահի ընտրութիւն կատարել տալ, քանի որ ինծի տրուած հրահանգը առաջնորդի ընտրութեան համար է։

ՄՈՒՇԵՂ. ԱՐԳԵՊ. — Մենք օրէնքի մը առջեւ կը գտնութիւնք այս պահուս, և տրուած հրահանգի մը համեմատ պիտի շարժինք։ Տեղապահի ընտրութիւն չենք կընար կատարել ո՛չ միայն անոր համար, որ ակասած կ'ըլլանք Կաթողիկոսական հըրամանին, այլ և Ամերիկահայ Սահմանադրութեան, բառ օրում ծեղապահի ընտրութիւնը կեդր. Վարչութեան կը պատկանի և ո՛չ Երեսփ. Ժողովի։ Առաջնորդական ընտրութեան պահուն ալ պէտք չէ՝ աշքը վրնպեցնել սա պարագան, թէ մենք մեր ընտրութիւնը պիտի կատարենք մեզի զրկուած եռանուն հանկին վրայէն միայն, որովհեակ ո՛չ միայն չունինք ընտրելի մը, որուն հաւանութիւնը կանխաւ առնուած ըլլար, այլ և կեդր. Վարչութիւնը պաշտօնագէս ընտրելեաց եռապատիկ ցանկ ուղելով Ամենայն Հայոց վեհ։ Հայրապետէն, այդ զիտումը իսկ յօժարութիւն յայտնած կ'ըլլայ եռանուն ցանկէն չ'եղել։ Այս է Ամերիկահայ Սահմանադրութեան ոգին, որ որչափ ալ հակասէ Ազգ. Սահմանադրութեան ակզբունքներուն, ստիպուած

հնք յարդեւ, որչափ չէ վերաքննուած Ա.մելի ի կահայ Սահմանադրութիւնը : Այս բացատրութիւնները տաւլուս մէջ նպատակ մը ունիմ: Կը լոեմ, թէ կարգ մը թեմերէ հրահանգ տրուած է իրենց երեսփոխանոներուն, քուէնին կեղրոնացնել իմ անձիս վրայ: Շնորհակտութիւն յայտնելով ամէնուն, կուղամ յայտարարելու, թէ ես արդէն վերջնականապէս չըրաժարականս տուած եմ Ա.մերիկայի Առաջնորդական ընտրելիութենէ առաջին ընտրութենէն անմիշ ջապէս վերջ. նոյնը կրկնած եմ զեհ. Կաթողիկոսին, էջմիածին գտնուած պահուս, նոյնը գրաւորապէս հաղորդած եմ Պատուիրակ Սրբազնին, և հիմա նոյնը կը յայտարարեմ Զեզ, խնդրելով որ ցանկի անուններուն վրայ կեղրոնացնէք Զեր ուշադրութիւնը, և ըստ այնմ կատարենք մեր ընտրութիւնը :

Այս խնդրոյն առթիւ Պրն. Մաղաք Պէտքէրեան հետեւալ բանաձեւ ներկայացուց ժողովին.

« 1. — Նկատելով որ թեմերու մեծամասնութիւնը հրահանգ տուած է իր երեսփոխաններուն, օրինական ձեակերպութիւնները լրացնելէ վերջ ըըւէնին միացնել Գեր. Տ. Մուշեղ Արքեպ. Սեր Բեանի վրայ:

« 2. — Նկատելով որ կեղր. Վարչութիւնը ընտրելեաց եռապատիկ ցանկ խնդրած է զեհ. Հայրապետէն, անոր վրայէն կատարելու համար առաջնորդի ընտրութիւնը .

« 3. — Նկատելով որ Գեր. Տ. Մուշեղ Արքեպ. անպայմանօքն ու վերջնապէս հրաժարած է ու կը հրաժարի առաջնորդական ընտրելիութենէ.

« Ժողովս կը համաձայնի առաջնորդական ընտ-

րութիւն կատա, ել եռապատիկ ցանկին վրայ, հնազգանդած ըլլալու համար Հայրապետական կարգադրութեան» :

Սոյն բանաձեւը ընդունուեցաւ միաձայնութեամբ. ուր միայն Պոստոնի աշխարհական երեսփոխանները ձեռնպահ մնացին, թեմական Ժողովին տրոնած հքարանգին համաձայն :

Տեղեկութիւններ հաղորդուեցան ընտրելիներուն ու արժանեաց մասին, ու թեր ու դէմ վիճաբանութիւններէ, կարծեաց փոխանակութենէ յետոյ ժամը Յին դադտր տրուեցաւնիստին, մէկ ժամ յետոյ վիրտկուելու պայմանով :

— (Այս միջոցին Երեսփոխանները բոլորուեցան ձաշտաեղանին չուրջ. զոր իպատիւ Երեսփոխաններուն պատրաստած էր Ո.ստրի Պատ. Հոգաբարձութիւնը) :

Նիւալ վերաբացուեցաւ ժամը 4ին:

Կ. ՉԱՆԴԱԼԵԱՆ. — Այս Ժողովին մէջ քիչ առաջ բացատրութիւններ տրուեցան Ամերիկահայ Սահմանադրութեան առաջին յօդուածին վրայ, ի մասին եպիսկոպոս առաջնորդի: Ես կ'առաջարկեմ որ ընսրուելիք առաջնորդը ով որ ալ ըլլայ, պէտք է ժամանակ մը պաշտոնառարէ, և եթէ երբէք գընատելի ծառայութիւններ մատոյց գաղութիս, անկէ վերջ միայն կազմուելիք Երեսփ. Ժողովը եպիսկոպոսական վկասիից տայ իր առաջնորդին :

Առաջարկը միաձայնութեամէ ընդունուեցաւ, և ձեռնարկուեցաւ առաջնորդական ընտրութեան, հետեւալ եռանուն ցանկին վրայ.

S. Արսէն Ծ. Վրդ. Վեհունի	
S. Վարդան Ծ. Վրդ. Գաս Կարենս	
S. Գէորգ Վրդ. Թուրեան	
Անմիջապէս յանձնախումբ մը ընտրուեցաւ բը- լէներուն հակելու համար, հետևեալ կերպով.	
S. Տրիփոն Վրդ. Պիծակեան	
Վահան Քիւրքճեան	
Նիկողոս Խաչմանեան	
Քուէրակութեան արդիւնքը եղաւ հետեւալը.	
S. Արսէն Ծ. Վրդ. Վեհունի	16 քուէ
S. Վարդան Ծ. Վրդ. Գասպարեան	5 »
Զեռնպահ	2 »
Ճերմակ	1 »

Հետեւարար Ամերիկահայ վիճակի ընտրեալ ա-
ռաջնորդ հոչակուեցաւ S. Արսէն Ծ. Վրդ. Վեհու-
նի, որ իրեն եղած չնորհաւորութենէն յետոյ, ոտքի
ելաւ, և շնորհակալութիւն յայտնելով իրեն հան-
դէպ ցոյց տրուած վաստակութեան համար, ըստու.
«Սոյն վիճակին կրօնական գործերը վարելու կա-
րող արժանաւորագոյն անձը ունէինք յանձին S. Մուշեղ Արքեպիսկոպոսի, բայց բանի որ ան վերջ-
նապէս կը հրաժարի առաջնորդական թեկնածութե-
նէ, կ'ընդունիմ Զեր կողմէն ինծի տրուած խաչը՝
այն վստահութեամբ թէ ինծի հետ պիտի ունենած
Գեր. S. Մուշեղ Արքեպիսկոպոսի դնահատելի օ-
ժանդակութիւնը, ինչպէս նաև Պատ. Երեսփ. Ժո-
ղովիկ, Կեդր. Վարչութեան, Հոգարարձութեանց,
և ծոլովուրդին օժանդակութիւնը, օգտակարապէս
կարենալ ծառայելու համար Ամերիկահայ Գաղթա-
կանութեանց:

Գեր. Իւթիւճեան Սրբազան իր գոհունակու-
թիւնը յայտնեց Երեսփ. Ժողովին, որ կցաւ խա-
ղաղ Կերպով կատարել Առաջնորդի ընտութիւնը,
և մալթանքներ ըրաւ նորընտիր Առաջնորդին, Ե-
րեսփսանութեան, Ամերիկայի բոլոր Հոգարար-
ձութեանց և ժողովուրդին համար:

S. Մուշեղ Արքեպիսկոպոս առաջարկեց, որ
անմիջապէս պատրաստուի ընտրութեան տեղեկա-
դիրը, միենոյն ժամանակ գոհունակութիւն յայտ-
նուի Վեհ. Կաթողիկոսին իր Լիազօր Պատուիրապին
Ամերիկայի մէջ ունեցած ուղղամիտ, արդար և օ-
րինաւոր գործունէութեանը համար, և ստորագրուի
բոլոր Երեսփսաններէն: Տեղեկագիրը անմիջապէս
պատրաստուեցաւ, և առանց բացառութեան բոլոր
Երեսփսանները ստորագրեցին:

Գալով Սահմանադրութեան վերաբննութեան
խնդրոյն, թէպէտ Վերաբննութեան Յանձնաժողո-
վը՝ բաղկացած՝ S. Մուշեղ Արքեպիսկոպոս Սերու-
եանէ, Տր. Փառնակ Աղաւեանէ, և Մաղաք Պէր-
պէրեանէ, իր գործը աւարտած էր, բայց Երկու
փորձերու միջոցին աեսնուեցաւ որ անոր վիճարա-
նութիւնը երկար օրերու կը կարօտի, Ժողովը ո-
րոշեց արգէն գոյութիւն ունեցող Վերաբննութեան
Յանձնաժողովին վրայ աւելցնել Երկու նոր ան-
դամներ ևս, որք են Տիարք Վահան Քիւրքճեան և
Միհրան Սըվազլի, յանձնարարելով մօտաւոր նիս-
տի մը մէջ անզամ մըն ալ աչքէ անցնել զայն, ու
յետոյ տպագրութեան տալով, դրկել Երեսփսան-
ներուն և Կարեն Պատուած անձնաւորութեանց,
և անոնց դիտողաւթիւնները հաւաքելով ներկայա-

ցընել յառաջիկայ Երեսփ. Ժողովին:

ՄՈՒՇԵՂ. Ա.ՐՔԵՊԻՍԿՈՂՈՍ.— Ես կ'առաջարկեմ որ Առաջնորդական ընտրութիւնը Հայրապետական Կոնգակով վա երացուելու թուակսնչն ըսկըսեալ Սոյն Երեսփ. Ժողովը լուծուած հոչակուի, առանց սպասելու Սահմանադրութեան վերաբնութեան վերջաւորութեանը:

Սոյն առաջարկը սիածայնութեամբ ընդունուեցաւ:

Հուսկ յետոյ վիճարանո թիւնները սկսան դէպի Ա.Ներկիւ Հայ Գաղթականութեան հոսանքը կասեցնելու խնդրոյն շուրջ, իրրև մէկը օրուան ազգային ամէնակարեւոր ինդիրներուն:

ՏՅ. Ա.ԴԱՄԵԱՆ.— Ես կը խորհիմ, թէ գաղթումի պատճառներէն մէկը անտեսականն է, և Հ. Բ. Ը. Միութիւնը ձեռք առած է անոր զարմանը: Արդէն Եգիպտոս և Բարիզ ձեռնարկներ եղած են հանգանակութիւններով օգնութեան հասնելու խեղճերուն Միութեան նախաձեռնութեամբ: Ես պիտի առաջարկէի, խնդրել Ս. Հայրապետէն, որ Կոնդակով մը կեդր. Վարչութեան միջոցաւ կոչ մը ուղղէր Ամերիկահայսութեան, հանգանակութեան համար, ու կեդր. Վարչութիւնը միացած հարուստներուն և Հ. Բ. Ը. Միութեան Պատճառիւղերուն, ջանար արդիւնաւորել այդ հանգանակութիւնը:

Գ. ԱՐԱՊԵԱՆ.— Գաղթի պատճառը անտեսական չէ միայն. եթէ այդքան դիւրին է Երկրին մէջ մնալ, բաւական չէ հեռուէն խրատել. մեղմէ կա՞յ մէկը, որ յօժարէր ինքինքը նետել նեղութեան ու տառապանքի այդ աշխարհին մէջ:

Ա.ՐՍԻԿՆ ՎՐԴԻ.— Արտագաղթի պատճառներէն մէկը զինուորագրութեան ինդիրն է: Եթէ կարելի է դիմենք Պատրիարքարան, և ինդրէնք որ Կայսերական ներում մը ձեռք բերէ այդ փախստական երիտասարդներուն համար, թերեւս այս միջոցը օգնէ շատ մը երիտասարդներու վերագարձին:

ԶԱՅՆԵՐ.— Եւ սակայն ո՞վ պիտի երաշխաւորէ այդ ներումին գործադրութիւնը: Ճեսանք, թէ ինչպէս վարուեցան ներումի արժանացած փախստական Զէլթունցիներու հետ:

ՄՈՒՇԵՂ. Ա.ՐՔԵՊ.— Ես կը խորհիմ, թէ առաջարկուած միջոցները շատ աննշան, շատ երկրորդական կը մնան պէտքին ու պարագային առջև: Արտագաղթը չ'զաղրիր ո՛չ Հ. Բ. Ը. Միութեան ձեռք առած միջոցներով, ո՛չ Պատրիարքական Կոնդակներով և ո՛չ ալ խրատատու քարոզիչներու ձեռքով: Արտագուղթին պատճառը քագաքական է պարզապէս, և նոյն իսկ անտեսականը անկէ կախում ունի: Դարման մը միայն կայ, և ան ալ Հայկական բարենորոգում ըստածն է: Առանց ատոր խեր չկայ: Եւ որչափ ատեն Եւրոպական շահամոլ անտարբերութիւնը գերեղմանի քարի պէս ճնշէ մեր դիակներուն և մեր հոգիներուն վրայ, այս ժողովուրդը պիտի գաղթէ. և ձեռք պիտի առնու ազգային անձնասպանութեան ճամբան: Եւ վերջապէս, օր մը, ալ յուսահատած իր սպասումներէն, և դիւանագիտական անբարոյութիւնն, պիտի մզուի վճռական քայլերու, երբ տեսնէ, թէ ազգովին կարենալ ապրելու և ամար ալ ուրիշ ճար չկայ: Երբ այս է իրողութիւնը, մէկ միջոց միայն ունինք

առայժմ ձեռքեռնիս, որ է դիմել վեհ. Կաթողիկոսին, և պարզելով Ամերիկահայ Գաղութին նիւթական, բարոյական և ֆիզիքական տիտուր վիճակը, ու ցոյց տալով նաև, թէ Հայկական բարենորդգումներն են միակ գարմանը արտագաղթը արգիլերու, և ազգասպանութեան առաջքը առնելու, խընդրել, որ Հարունակէ իր դիմումները Հայկական Բարենորդգմանց համար :

Այս վերջին առաջարկը ընդունուեցաւ երեսփոխաններէն:

Յետոյ շնորհակալութիւն յայտնուելով Դիւանին, իր ժողովը վարելու ընդունակութեանը համար, Ժողովը փակուեցաւ ժամը 7ին, Տէրունական Ազգօթքով:

Ի դիմաց Երեսփոխանական ժողովոյ

Ա. տենադպիր

Ա. Յ. Տէրութեան

Ա. տենապետ

ՏՕՔ. Փ. Ա. Ա. Դ. Մ. Մ. Ե. Ա.

Նախագահ

Կաթ. Ժամանակաւոր

Լիազօր Պատուիրակ

Դէ՛քոր Ա. Ր. Ք. Ե. Պ. Ս. Ի. Ի. Զ. Ե. Ա. Ն.



2011

3545



ՀՀ Ազգային գրադարան



NL0030567

3445